ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2017

02.2017

03.2017

04.2017
Ապրիլ

05.2017

06.2017

07.2017

08.2017

09.2017

10.2017

11.2017

12.2017

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 24-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2017

Ապրիլ

թիվ 4 (224)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԹԵԼ-ՍԵԼ» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության «Թել-Սել Բագրատունյաց», «Թել-Սել Ամիրյան» և «Թել-Սել էջմիածին» մասնաճյուղերը հաշվառումից հանելու, «ԻՋԻ ՓԵՅ» ՍՊԸ վճարահաշվարկային կազմակերպության «Արաբկիր», «Աբովյան» և «Փոքր Կենտրոն» մասնաճյուղերը հաշվառելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԷԴՈՒԱՐԴՈ 2005» ՍՊԸ-ի և «Վ=Մ» ՍՊԸ-ի գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու, «ԱՐՄԵՆ-ՀԱՄԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՀՁ» ՍՊԸ-ին և «ԱԼԵՔՍ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի թիվ 14, 15, 16 մասնաճյուղերին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Կոմիտաս 2» մասնաճյուղի գործունեությունը դադարեցնելու թույլտվություն տալու, 6 ՍՊԸ-ի, 1 ՓԲԸ-ի, 2 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու, 1 ՈՒՎԿ ՓԲ ընկերության և 1 փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 64-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 16-ի թիվ 422-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

15 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 65-Ն որոշումը «Ֆինանսական խմբերի գործունեության կարգավորման նպատակով ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներն ու կարգը հաստատելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 66-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

23 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 67-Ն որոշումը «Միջազգային շուկաներում լայնորեն կիրառվող ածանցյալ ֆինանսական գործիքների, ֆինանսական գործարքների տիպային պայմանագրերը սահմանելու, ինչպես նաև գլխավոր համաձայնագրերի նկատմամբ պահանջներ սահմանելու մասին»

24 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 72-Ն որոշումը «Հայաստան ԱՄՀ/ՀԲ անդամակցության հոբելյան» արծաթե հուշադրամը շրջանառության մեջ դնելու և նկարագրությունը հաստատելու մասին»

26 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Հաշվառումից հանվել են*** «ԹԵԼ-ՍԵԼ» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Թել-Սել Բագրատունյաց», «Թել-Սել Ամիրյան» և «Թել-Սել էջմիածին» մասնաճյուղերը (որոշում թիվ 83Ա):
- ***Հաշվառվել են*** «ԻԶԻ ՓԵՅ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Արաբկիր» և «Աբովյան» մասնաճյուղերը (որոշում թիվ 84Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «ԷԴՈՒԱՐԴՈ 2005» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «Վ=Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գրավատնային գործունեության իրականացման լիցենզիաները (որոշումներ թիվ 85Ա, 86Ա):
- ***Հաշվառվել է*** «ԻԶԻ ՓԵՅ» ՍՊԸ վճարահաշվարկային կազմակերպության «Փոքր Կենտրոն» մասնաճյուղը (որոշում թիվ 94Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ԱՐՄԵՆ-ՀԱՄԻԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ ՀՁ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 96Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ԱԼԵՔՍ ՀՈԼԴԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 14, 15, 16 մասնաճյուղերին (որոշում թիվ 97Ա):
- «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերությանը ***թույլատրվել է դադարեցնել*** բանկի «Կոմիտաս 2» մասնաճյուղի գործունեությունը (որոշում թիվ 1/246Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 6 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, 1 փակ բաժնետիրական ընկերության, 2 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 3 611 925 դրամ գումարի չափով, 1 ՈՒՎԿ փակ բաժնետիրական ընկերության և 1 փոխանակման կետի հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նմանատիպ խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/238Ա, 1/241Ա, 1/281Ա 1/292Ա, 1/308Ա, 1/309Ա, 1/310Ա, 1/311Ա, 1/312Ա, 1/313Ա, 1/314Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 16-ի թիվ 422-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածը,

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 16-ի «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման կարգը» հաստատելու մասին թիվ 422-Ն որոշմամբ հաստատված «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման կարգում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կարգի 2.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2.1 Հիմնադրամը, սույն կարգով սահմանված ժամկետներում Կենտրոնական բանկին տրամադրում է հետևյալ տեղեկությունները՝

1) հաշվետվություն Հիմնադրամի միջոցների վերաբերյալ՝ սույն կարգի հավելված 1-ով սահմանված ձևով, ինչպես նաև Հիմնադրամի եռամսյակային «ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը» և «Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը»,
2) Հիմնադրամի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ անկախ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը,
3) հաշվետվություն արտարժույթի առուվաճառքի գործառնությունների վերաբերյալ՝ սույն կարգի հավելված 2-ով սահմանված ձևով,
4) հաշվետվություն Հիմնադրամի կողմից արժեթղթերի երկրորդային շուկայում կատարված գործառնությունների վերաբերյալ՝ սույն կարգի հավելված 3-ով սահմանված ձևով:

Հիմնադրամի կողմից Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և այլ տեղեկությունները պետք է լինեն ամբողջական և արժանահավատ:»,

2) Կարգի 2.2-րդ կետի 2-րդ, 3-րդ և 4-րդ նախադասությունները հանել,

3) Կարգի 2.3-րդ կետում՝

ա. առաջին նախադասությունից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Հիմնադրամը 2.1-րդ կետով սահմանված հաշվետվությունները ներկայացնում է էլեկտրոնային փոստով՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով՝ Կենտրոնական բանկի կողմից տրամադրված հասցեով: Սի-Բի-էյ-նեթ համակարգի խափանման դեպքում հաշվետվությունները Կենտրոնական բանկի հաշվետվությունների ընդունման և ամփոփման համար պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացվում են մագնիսական կրիչներով՝ կից ներկայացնելով խափանման վերաբերյալ գրություն:»,

բ. «Սույն կարգի 2.1-րդ կետի 1-ին ենթակետում նշված տեղեկատվությունը ներկայացվում է » բառերը փոխարինել «Սույն կարգի 2.1-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված հաշվետվությունները ներկայացվում են » բառերով,

4) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.9--րդ կետով.

«2.9 Հիմնադրամը սույն կարգի 2.1-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված հաշվետվությունները լրացնում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի փետրվարի 26-ի «Բանկերի

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. մարտի 17-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 10.04.2017 թ. (ՀՀԳՏ N14 (583), 18.04.2017):

հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ը հաստատելու մասին» թիվ 50-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ով սահմանված ձև թիվ 19 և ձև թիվ 32 հաշվետվությունների լրացման կանոններին համապատասխան: Սահմանված ժամկետներում հաշվետվություն չներկայացնելը հիմք է առ այն, որ Հիմնադրամը սույն կարգի 2.1-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված հաշվետվություններում արտացոլվող գործարքներ չի իրականացրել:»,

5) Կարգի 3.5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.5 Կենտրոնական բանկը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 15-ը Հիմնադրամին է տրամադրում տեղեկանք սույն կարգի հավելված 4-ով սահմանված ձևով:

Կենտրոնական բանկը մինչև յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը Հիմնադրամին է տրամադրում տեղեկատվություն ֆինանսական շուկայի վերաբերյալ՝ սույն կարգի հավելված 5-ով սահմանված ձևով:»,

6) Կարգի հավելված 2-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն սույն որոշման հավելված 1-ի (կցվում է),

7) Կարգը լրացնել հավելված 3-ով, հավելված 4-ով և հավելված 5-ով՝ համաձայն սույն որոշման հավելված 2-ի, հավելված 3-ի, հավելված 4-ի (կցվում են):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
23 մարտի 2017 թ., N 64-Ն

Հավելված 1
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մարտի 17-ի թիվ 64-Ն որոշմամբ

«Հավելված 2
«Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման» կարգի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արտարժույթի առքուվաճառքի գործառնությունների վերաբերյալ
(օրական)

Հաշվետու անձի անվանումը՝ _____
Ամսաթիվը _____*թ.*

Հ/հ	Գործարքի տեսակը	Փոխարկվող արժույթներ (գնվող/վաճառվող)	Առքի ծավալ (արտարժույթով)	Առքի միջին կշռված փոխարժեք	Վաճառքի ծավալ (արտարժույթով)	Վաճառքի միջին կշռված փոխարժեք	Միջին փոխարժեք
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							

Հիմնադրամի տնօրեն՝ _____
Գլխավոր հաշվապահ՝ _____

»:

Հավելված 2
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի թիվ 64-Ն որոշմամբ

Հավելված 3
«Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման» կարգի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աղյուսակ 1. Արժեթղթերի առուվաճառքի գործարքների վերաբերյալ (օրական)

Հաշվետու անձի անվանումը՝ _____

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը՝ _____

N	Գործարքի կնքման օրը (ամսաթիվ/ժամ)	Արժեթղթի տեսակը	Արժեթղթի միջազգային նույնականացման համարը (ISIN)	Թողարկողի ֆինանսական վիճակի, գնահատման վերաբերյալ տեղեկությունները	Արժեթղթերի գնահատման մեթոդաբանությունը	Գործարքի կողմերը	Քանակը	Ընդհանուր տույժերը	Գործարքի գումարը ISO 4217 փոխարկման կոդով	Գործարքի կնքման վայրը	Գործարքի կնքման ժամանակը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի տույժ կնքման ժամանակը	Նկատի
1														
2														
3														
4														
5														
6														
7														
8														
9														
10														
11														
12														
13														
14														
15														
16														
17														
18														
19														
20														
21														
22														
23														
24														
25														
26														
27														
28														

Հիմնադրամի տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ՝ _____

Աղյուսակ 2. Ռեպո գործարքների կնքման վերաբերյալ

Հաշվետու անձի անվանումը՝ _____

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը՝ _____

N	Գործարքի համարը	Գործարքի տեսակը (ռեպո/հակադարձ ռեպո)	Գործարքի բնույթը	Արժեթղթի տեսակը	Արժեթղթի միջազգային նույնականացման համարի (ISIN) առկայությունը	Ռեպոյի ֆինանսական միջոցների գումարը	Արժեթղթերի քանակը՝ ըստ տրամաբանական խմբերի	Արժեթղթերի գումարային արժեքը	Ընդհանուր եկամտաբերությունը	Գործարքի արժույթի ISO կոդը	Տարեկան ռեպո դրույքաչափը (սեռեպո գործարքների դեպքում)	Ռեպո/հակադարձ ռեպո գործարքի մարման ամսաթիվը	Գործարքի կնքման ամսաթիվը	Գործարքի կատարման ամսաթիվը	Փոփոխված գործարքի ամսաթիվը	Գործարքի մյուս կողմը	Նկարագիր
1																	
2																	
3																	
4																	
5																	
6																	
7																	
8																	
9																	
10																	
11																	
12																	
13																	
14																	
15																	
16																	
17																	
18																	
19																	
20																	
21																	
22																	
23																	
24																	
25																	
26																	
27																	
28																	
29																	
30																	
31																	
32																	
.....																	

Հիմնադրամի տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ՝ _____

Աղյուսակ 3. Փոխարժեքային սվոփ գործարքների կնքման վերաբերյալ

Հաշվետու անձի անվանումը՝ _____

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը՝ _____

N	Գործարքի նույնականացման համարը	Գործարքի բնույթը	Գործարքի կողմերը (փոխո նախնական / փոխո ցուցիչային)	Գործարքի վճարման ամսաթիվը ISO կոդ	Գործարքի արժույթի ISO կոդ	Ձեռքբերված (ստացվող) վճարման դրամական միավոր	Գործարքի արժույթ	Սփոթ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Միավորում ցուցիչ	Միավորում վճարման ենթակա գումար	Միավորում ցուցիչային միավորների վճարման ենթակա	Միավորում ցուցիչային փոխհատուցվող	Գործարքի ուսմն վճարման	Նկարագրություն
								Գնորդվող արժույթի կիրառելի գումար (միավոր)	Ստացվող արժույթի կիրառելի գումար (միավոր)	Գնորդվող արժույթի կիրառելի գումար (միավոր)	Ստացվող արժույթի կիրառելի գումար (միավոր)						
1																	
2																	
3																	
4																	
5																	
6																	
7																	
8																	
9																	
10																	
11																	
12																	
13																	
14																	
15																	
16																	
17																	
18																	
19																	
20																	
21																	
22																	
23																	
24																	
25																	
26																	
27																	
....																	

Հիմնադրամի տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ՝ _____

Աղյուսակ 4. Արժութային սվոփ գործարքների կնքման վերաբերյալ

Հաշվետու անձի անվանումը՝ _____

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը՝ _____

N	Գործարքի կնքման ամսաթիվ	Գործարքի ժամկետ	Գործարքի կնքման վայրը (երկրի անվանումը / փոխանակման վայրի անվանումը)	Վաճառվող արժույթի ISO կոդը	Վաճառվող գումարի չափը	Գնվող արժույթի ISO կոդը	Գնվող գումարի չափը	Գործարքի կնքման նպատակը	Գործարքի կնքման նպատակի մասին տեղեկատվության աղբյուրը	Սկզբնական գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Ֆորվարդ գործարքի ընթացքում փոխանակվող արժույթների գումարը (ծավալը)		Միկրոտրամ գործարքի կնքման վայրը	Միկրոտրամ գործարքի փոխհատուցման ենթակա գումարի չափը	Միկրոտրամ գործարքի կնքման վայրում վիրտուալ արժույթների վաճառքի ենթակա գումարի չափը	Միկրոտրամ գործարքի կնքման ենթակա գումարի չափը	Նշումներ
										Սկզբնական գործարքի կնքման ենթակա գումարի չափը (ծավալը)	Ամորտիզացիոն վճարման կնքման վայրը (ծավալը)	Սկզբնական գործարքի կնքման ենթակա գումարի չափը (ծավալը)	Ամորտիզացիոն վճարման կնքման վայրը (ծավալը)					
1																		
2																		
3																		
4																		
5																		
6																		
7																		
8																		
9																		
10																		
11																		
12																		
13																		
14																		
15																		
16																		
17																		
18																		
19																		
20																		
21																		
22																		
23																		
24																		
25																		
26																		
27																		
28																		
29																		
30																		
…																		

Հիմնադրամի տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ՝ _____

Աղյուսակ 5. Տոկոսադրույքային սվոփ գործարքների կնքման վերաբերյալ

Հաշվետու անձի անվանումը՝ _____

Հաշվետվության ներկայացման ամսաթիվը՝ _____

N	Գնորդի կողմից վճարվող ֆիքսված տոկոսադրույքը	Գնորդի կողմից վճարվող փոփոխական տոկոսադրույքը (անվանումը)	Գնորդի կողմից վճարվող տոկոսադրույքի փոփոխման հաճախականությունը	Գնորդի կողմից վճարվող տոկոսադրույքի հիմքում ընկած ինդեքսը	Գնորդի կողմից վճարվող տոկոսադրույքի հիմքում ընկած ինդեքսի տեսակը	Գնորդի կողմից վճարվող տոկոսադրույքի հիմքում ընկած ինդեքսի վճարման հաճախականությունը	Գնորդի կողմից վճարվող տոկոսադրույքի հիմքում ընկած ինդեքսի վերահաշվարկման հաճախականությունը	Գնորդի կողմից վճարվող տոկոսադրույքի հաշվարկման եղանակը	Վաճառողի կողմից վճարվող փոփոխական տոկոսադրույքը	Վաճառողի կողմից վճարվող տոկոսադրույքի հիմքում ընկած ինդեքսի տեսակը	Վաճառողի կողմից վճարվող տոկոսադրույքի հիմքում ընկած ինդեքսի վճարման հաճախականությունը	Վաճառողի կողմից վճարվող տոկոսադրույքի հիմքում ընկած ինդեքսի վերահաշվարկման հաճախականությունը	Վաճառողի կողմից վճարվող տոկոսադրույքի հաշվարկման եղանակը	Արտարժույթը
1														
2														
3														
4														
5														
6														
7														
8														
9														
10														
11														
12														
13														
14														
15														
16														
17														
18														
19														
20														
21														
22														
23														
24														
25														
26														
27														
28														
29														
30														
....														

Հիմնադրամի տնօրեն _____

Գլխավոր հաշվապահ՝ _____

Հավելված 3
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մարտի 17-ի թիվ 64-Ն որոշմամբ

«Հավելված 4
«Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման» կարգի

ՏԵՂԵԿԱՆՔ
(տարեկան)

1	**Մակրոտնտեսական ցուցանիշներ**	
1.2.	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	
1.3.	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ՀՀ դրամ)	
1.4.	Գնաճ (ժամանակաշրջանի վերջ, նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ. %)	
2	**Տոկոսադրույքներ**	
2.1.	Ֆիզիկական անձանց ՀՀ դրամով ավանդների միջին տոկոսադրույքը*	
2.2.	Ֆիզիկական անձանց ՀՀ դրամով ավանդների միջին տոկոսադրույքը**	
3	**Բանկային համակարգի**	
3.1.	Ընդհանուր ակտիվները (մլն ՀՀ դրամ)	
3.2.	Ընդհանուր կապիտալը (մլն ՀՀ դրամ)	
4	**Ավանդների և բանկային հաշիվների ընդհանուր ծավալը**	
4.1.	Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց (մլն ՀՀ դրամ)	
4.2.	Ռեզիդենտ իրավաբանական անձանց (մլն ՀՀ դրամ)	
4.3.	Ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (մլն ՀՀ դրամ)	
4.4.	Ռեզիդենտ ֆիզիկական անձանց (մլն ՀՀ դրամ)	

** Ընդգրկվում են մինչև 1 տարի ժամկետայնություն ունեցող ավանդների տոկոսադրույքները:*

*** Ընդգրկվում են 1-ից բարձր տարի ժամկետայնություն ունեցող ավանդների տոկոսադրույքները:*

Հավելված 4
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մարտի 17-ի թիվ 64-Ն որոշմամբ

«Հավելված 5
«Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև տեղեկությունների փոխանակման և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման» կարգի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Պետական պարտատոմսերի առաջնային շուկայում տեղաբաշխված պարտատոմսերի վերաբերյալ
(տարեկան)

Ընդամենը	Ընդամենը ըստ իրավաբանական կարգավիճակի	Ընդամենը ըստ տեղակայման	Ընդամենը ըստ արժույթի	Շրջ. ժամկետ	Ընդամենը	Նվազ. տեղ	Ընդամենը ըստ եկամտաբերության	Տեղաթողումների	Ընդամենը ըստ գործընկերների

Պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում իրականացված գործառնություններ (ՀՀ դրամ)*

Հաշվետու տարի	*ՊՊ մինչև մարում ժամկետայնություն*												***Ընդամենը***	
	մինչև 6 ամիս		***6 ամսից 1 տարի***		***1-2 տարի***		***2-5 տարի***		***5-7 տարի***		***7 տարուց ավելի***			
	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	***մլն դրամ***	***%***
Հունվար														
MAX														
MIN														
STDEV														
Փետրվար														
MAX														
MIN														
STDEV														
Մարտ														
MAX														
MIN														
STDEV														

Ապրիլ														
MAX														
MIN														
STDEV														
Մայիս														
MAX														
MIN														
STDEV														
Հունիս														
MAX														
MIN														
STDEV														
Հուլիս														
MAX														
MIN														
STDEV														
Օգոստոս														
MAX														
MIN														
STDEV														
Սեպտեմբեր														
MAX														
MIN														
STDEV														
Հոկտեմբեր														
MAX														
MIN														
STDEV														
Նոյեմբեր														
MAX														
MIN														
STDEV														
Դեկտեմբեր														
MAX														
MIN														
STDEV														
Ընդամենը														
MAX														
MIN														
STDEV														

** Ներառված չեն ՀՀ ԿԲ գործառնությունները և ՀՀ եվրոպարտատոմսերը:*

*Ֆինանսական խմբերի գործունեության կարգավորման նպատակով ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներն ու կարգը հաստատելու մասին**

Նպատակ ունենալով սահմանել ֆինանսական խմբերի գործունեության կարգավորման նպատակով ժամանակավոր կառավարման մարմինների նշանակման չափանիշները և կարգը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.21-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով, 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Ֆինանսական խմբերի գործունեության կարգավորման նպատակով ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշներն ու կարգը»՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
23 մարտի 2017 թ., N 65-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մարտի 17-ի թիվ 65-Ն որոշմամբ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ

1. Սույն կարգը սահմանում է ֆինանսական խմբերի գործունեության կարգավորման նպատակով Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ժամանակավոր կառավարման մարմնի նշանակման չափանիշները և կարգը:

2. Սույն կարգի իմաստով փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի համաձայն:

3. Ֆինանսական խմբերի գործունեության կարգավորման նպատակով որպես ժամանակավոր կառավարման մարմին Կենտրոնական բանկի խորհրդի կողմից կարող է նշանակվել՝

1) ֆիզիկական անձը, ով միաժամանակ բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշներին.
   ա. որակավորումը, մասնագիտական գիտելիքները և աշխատանքային փորձը համապատասխանում են տվյալ տեսակի կազմակերպության ղեկավարի համար սահմանած մասնագիտական համապատասխանության և (կամ) որակավորման չափանիշներին,

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. մարտի 17-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 10.04.2017 թ. (ՀՀԳՏ N14 (583), 18.04.2017):

բ. փոխկապակցված չէ տվյալ ֆինանսական կազմակերպության, դրա ղեկավարների, ինչպես նաև ֆինանսական խմբի, որի անդամ է հանդիսանում տվյալ ֆինանսական կազմակերպությունը, անդամ այլ կազմակերպությունների հետ,

գ. ի վիճակի է կայացնել անկողմնակալ և շահերի բախումը բացառող որոշումներ:

2) իրավաբանական անձը, որը միաժամանակ բավարարում է հետևյալ նվազագույն չափանիշներին.

ա. ունի բավարար ինստիտուցիոնալ կարողություններ, համբավ, հեղինակություն տվյալ կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովում այդ կազմակերպության շահերից բխող որոշումների կայացման համար,

բ. փոխկապակցված չէ տվյալ ֆինանսական կազմակերպության, դրա ղեկավարների, ինչպես նաև ֆինանսական խմբի, որի անդամ է հանդիսանում տվյալ ֆինանսական կազմակերպությունը, անդամ այլ կազմակերպությունների հետ,

գ. ի վիճակի է կայացնել անկողմնակալ և շահերի բախումը բացառող որոշումներ:

Իրավաբանական անձի՝ կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովին մասնակցելու համար լիազորված ֆիզիկական անձը պետք է բավարարի սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները:

4. Ժամանակավոր կառավարման մարմնի իրավաբանական անձ թեկնածուն Կենտրոնական բանկ է ներկայացնում կազմակերպության մասնակիցների ընդհանուր ժողովին մասնակցելու համար լիազորված ֆիզիկական անձանց սպառիչ ցանկը: Իրավաբանական անձ ժամանակավոր կառավարման մարմնի՝ մասնակիցների ընդհանուր ժողովին մասնակցելու իրավասություն ունեցող լիազոր անձանց ցանկը ենթակա չէ փոփոխման առանց Կենտրոնական բանկի համաձայնության:

5. Կենտրոնական բանկը կարող է ժամանակավոր կառավարման մարմնի թեկնածուից պահանջել տեղեկատվություն վերջինիս՝ կազմակերպության ժամանակավոր կառավարման մարմին նշանակելու վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով:

6. Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ժամանակավոր կառավարման մարմինը նշանակվում է մինչև սույն կարգի 8-րդ կետով սահմանված դեպքերից որևէ մեկի ի հայտ գալը:

7. Ժամանակավոր կառավարման մարմինը վարձատրվում է ֆինանսական կազմակերպության կողմից: Ժամանակավոր կառավարման մարմնի վարձատրության չափը հաստատում է Կենտրոնական բանկը: Ընդ որում՝ ժամանակավոր կառավարման մարմնի վարձատրության չափը չի կարող գերազանցել տվյալ տեսակի ֆինանսական կազմակերպությունների գործադիր տնօրենների (վարչության նախագահների) վարձատրության՝ ժամանակավոր կառավարման մարմնի նշանակմանը նախորդող տասներկու ամիսների միջին մեծության կրկնապատիկը:

8. Ժամանակավոր կառավարման մարմնի իրավասությունները դադարում են այն դեպքում, երբ

1) քվեարկելու իրավունքից զրկված մասնակիցը օտարում է իր մասնակցությունը, կամ

2) Կենտրոնական բանկի կողմից վերականգնվում է քվեարկելու իրավունքից զրկված մասնակցի քվեարկելու իրավունքը: Կենտրոնական բանկի կողմից քվեարկելու իրավունքից զրկված մասնակցի քվեարկելու իրավունքը վերականգնվում է այն դեպքում, երբ Կենտրոնական բանկի հիմնավոր կարծիքով քվեարկելու իրավունքից զրկված մասնակցի մասնակցությունը այլևս ռիսկեր չի առաջացնում և չի կարող առաջացնել ֆինանսական խմբի կամ ֆինանսական խմբի անդամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության համար կամ չի վտանգում կամ չի կարող վտանգել ֆինանսական խմբի անդամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության հաճախորդների կամ սպառողների շահերը կամ չի խոչընդոտում կամ չի կարող խոչընդոտել ֆինանսական խմբի կամ ֆինանսական խմբի անդամ կազմակերպության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը, կամ

3) ժամանակավոր կառավարման մարմինը այլևս չի համապատասխանում սույն կարգի 3-րդ կետով սահմանված չափանիշներին, ինչպես նաև, եթե ժամանակավոր կառավարման մարմնի գործողությունը կամ անգործությունը ռիսկեր է առաջացնում կամ կարող է առաջացնել ֆինանսական խմբի կամ ֆինանսական խմբի անդամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության համար կամ վտանգում է կամ կարող է վտանգել ֆինանսական խմբի անդամ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆինանսական կազմակերպության հաճախորդների կամ սպառողների շահերը կամ խոչընդոտում է կամ կարող է խոչընդոտել ֆինանսական խմբի կամ ֆինանսական խմբի անդամ կազմակերպության նկատմամբ արդյունավետ վերահսկողության իրականացմանը:

9. Ժամանակավոր կառավարման մարմին նշանակված ֆիզիկական անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում իր հետ փոխկապակցված իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց մասին տեղեկատվություն՝ համաձայն սույն կարգի համապատասխանաբար Հավելված 1-ի և Հավելված 2-ի՝ յուրաքան-

չյուր փոփոխության դեպքում, փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

10. Ժամանակավոր կառավարման մարմին նշանակված իրավաբանական անձը Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) Կանոնադրության փոփոխությունը՝ փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում,
2) Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները՝ առնվազն կիսամյակային պարբերականությամբ, տարեկան ֆինանսական հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների անկախ աուդիտորական եզրակացությունը (առկայության դեպքում),
3) Իր հետ փոխկապակցված իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց մասին տեղեկություն՝ համաձայն սույն կարգի համապատասխանաբար Հավելված 1-ի և Հավելված 2-ի՝ յուրաքանչյուր փոփոխության դեպքում, փոփոխությունը տեղի ունենալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:

11. Կենտրոնական բանկը կարող է, բացի սույն կարգի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված փաստաթղթերից, ժամանակավոր կառավարման մարմնի վերաբերյալ պահանջել լրացուցիչ տեղեկատվություն:

12. Կենտրոնական բանկի կողմից վերահսկվող անձին որպես ժամանակավոր կառավարման մարմին նշանակելու դեպքում ժամանակավոր կառավարման մարմինը ներկայացնում է սույն կարգի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված տեղեկատվությունը այն դեպքում, երբ Կենտրոնական բանկը այլ գործընթացների շրջանակում չի տիրապետում այդ տեղեկատվությանը:

13. Սույն կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նշանակվում է նոր ժամանակավոր կառավարման մարմին: Մինչև Կենտրոնական բանկի խորհրդի կողմից նոր ժամանակավոր կառավարման մարմնի նշանակումը ձայնի իրավունքից զրկված մասնակցի քվեարկելու իրավունքը չի վերականգնվում:

14. Ժամանակավոր կառավարման մարմինը պետք է գործի՝ ելնելով տվյալ կազմակերպության շահերից, իր իրավունքները և պարտականությունները կատարի բարեխիղճ ու ողջամիտ կերպով, խուսափի անձնական և տվյալ կազմակերպության շահերի միջև իրական և հնարավոր բախումներից:

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մարտի 17-ի թիվ 65-Ն որոշման Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

Ժամանակավոր կառավարման մարմինը
Անվանումը (անունը, ազգանունը) _____ Կազմակերպության անվանումը, որում նշանակվել է ժամանակավոր կառավարման մարմին _____
Փոխկապակցված իրավաբանական անձի (կազմակերպության) տվյալներ *Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն:*
2.1.Անվանումը _____ 2.2. Գտնվելու վայրը _____ 2.3.Գրանցման ամսաթիվը _____ վայրը_____ համարը_____ *օր/ամիս/տարի* 2.4. Փոխկապակցվածության տեսակ _____

3. **Տեղեկություններ փոխկապակցված իրավաբանական անձի նշանակալից մասնակիցների վերաբերյալ**
(*Կենտրոնական բանկի կողմից կարող են լրացուցիչ պահանջվել 3.1 կետում նշված կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները)*

3.1. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող իրավաբանական անձինք.

Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

3.2. Ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոս ունեցող ֆիզիկական անձինք

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Բնակության վայրը	Մասնակցության չափը (դրամով)	Մասնակցության չափը (%)

4. Տեղեկություններ փոխկապակցված իրավաբանական անձի ղեկավարների (խորհրդի նախագահի և անդամների, գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի) վերաբերյալ

Անունը, ազգանունը, անձնագրի տվյալները	Պաշտոնը	Կազմակերպությունում աշխատելու տարիները (որոնցից՝ նշված պաշտոնում)

5. Այլ տեղեկատվություն

5.1. Արդյո՞ք իրավաբանական անձն ունի ֆինանսական խմբի անդամ(ներ)ի նկատմամբ պարտավորություններ:

☐ Այո
☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

5.2. Արդյո՞ք փոխկապակցված իրավաբանական անձն ունի 30 օր և ավելի ժամկետանց (չմարված) պարտավորություններ**:**

☐ Այո
☐ Ոչ

«Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:

5.3. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն

6. *Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:*
Համաձայն եմ իմ կողմից ներկայացված վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:

Ժամանակավոր կառավարման մարմնի
(իրավասու անձի) անունը, ազգանունը _____

Ստորագրություն _____ _____
օր/ամիս/տարի

ՀԱՎԵԼՎԱԾ 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2017 թվականի մարտի 17-ի թիվ 65-Ն որոշման Հավելվածի

ՏԵՂԵԿԱՆՔ

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

1. Ժամանակավոր կառավարման մարմինը Անվանումը (անունը, ազգանունը) _____
1.1.Կազմակերպության անվանումը, որում նշանակվել է ժամանակավոր կառավարման մարմին _____
Փոխկապակցված ֆիզիկական անձի տվյալներ *Փոխկապակցվածությունը պետք է դիտարկվի «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն:* *Ընտանիքի անդամների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են միայն ծնողների, ամուսնու, երեխաների, քրոջ և եղբոր (եթե համատեղ տնտեսություն են վարում) վերաբերյալ:*
2.1. Անունը, ազգանունը _____ 2.2. Բնակության վայրը _____ 2.3. Անձնագրի տվյալները _____ 2.4. Հանրային ծառայությունների համարանիշը _____ 2.5. Փոխկապակցվածության տեսակը _____
3. Այլ տեղեկատվություն
3.1. Արդյո՞ք իրավաբանական անձն ունի ֆինանսական խմբի անդամ(ներ)ի նկատմամբ պարտավորություններ: ☐ Այո ☐ Ոչ «Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:
3.2. Արդյո՞ք ֆիզիկական անձն ունի 30 օր և ավելի ժամկետանց (չմարված) պարտավորություններ: ☐ Այո ☐ Ոչ «Այո» պատասխանի դեպքում ներկայացնել մանրամասները:
3.3. Այլ՝ Ձեր կարծիքով կարևոր տեղեկատվություն
4. *Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ փաստաթղթի կամ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված քրեական և վարչական պատասխանատվության:* *Համաձայն եմ վերոնշյալ տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում տեղեկացնել Կենտրոնական բանկին:* *Ժամանակավոր կառավարման մարմնի* *(իրավասու անձի) անունը, ազգանունը* _____ Ստորագրություն _____ *օր/ամիս/տարի*

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով կատարելագործել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե», «իբ» և «իդ» կետերը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 111-րդ հոդվածի 2-րդ մասը, 181-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ կետը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հուլիսի 9-ի ««Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգը» հաստատելու մասին» թիվ 173-Ն որոշմամբ հաստատված «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ կարգում» (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետում «ՀՀ տարածքում գործող բանկերը» բառերից հետո լրացնել «(այսուհետ՝ նաև բանկ)» բառերը,
2) Կարգի 4-րդ կետը 27-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 28-37-րդ ենթակետերով.

«28) ***Ներքին ռիսկ***՝ ներքին տեղեկատվական ցանցի օգտագործողի կողմից ոչ միտումնավոր (սխալմամբ, պատահական, չմտածված, ոչ չարամիտ, ոչ շահադիտական նպատակներով, օրինակ՝ անփութության կամ անտեղյակ լինելու պատճառով, հետաքրքրությունից ելնելով կամ այլ կերպ կատարված) և միտումնավոր (շահադիտական նպատակներով, երրորդ անձանց դրդմամբ, չարամտորեն կամ այլ կերպ կատարված) գործողությունների հետևանքով առաջացող հնարավոր ռիսկերը Կազմակերպության տեղեկատվական անվտանգության համար:

29) ***Արտաքին ռիսկ***՝ Կազմակերպության աշխատակից չհամարվող անձանց միտումնավոր և ոչ միտումնավոր գործողությունների հետևանքով առաջացող հնարավոր ռիսկերը Կազմակերպության տեղեկատվական անվտանգության համար, ինչպես նաև այն ռիսկերը, որոնք չեն կարող կառավարվել Կազմակերպության կարգավորող փաստաթղթերով:

30) ***Ներքին ներթափանցման թեստ (Internal network penetration testing)***՝ միջոցառումների ամբողջություն, որն ուղղված է ստուգելու Կազմակերպության ներքին տեղեկատվական ցանցի պաշտպանվածությունը ներքին ռիսկերից**:**

31) ***Արտաքին ներթափանցման թեստ (External network penetration testing)***՝ միջոցառումների ամբողջություն, որն ուղղված է ստուգելու կազմակերպության ներքին տեղեկատվական ցանցի պաշտպանվածությունը արտաքին ռիսկերից:

32) ***Սոցիալական ինժինիրինգ (Social engineering)***՝ ներքին տեղեկատվական ցանցի լիազորված օգտագործողին մոլորեցնելու ճանապարհով գաղտնի տեղեկատվության ձեռքբերում:

33) ***Բարձր վտանգ պարունակող կայուն սպառնալիք (Advanced persistent threat - APT)***՝ ցանցային գրոհ, որի ժամանակ չլիազորված անձը ձեռք է բերում հասանելիություն Կազմակերպության ներքին տեղեկատվական ցանցին և որոշակի ժամանակ մնում է չհայտնաբերված:

34) ***Բարձր վտանգ պարունակող կայուն սպառնալիքի թեստ (Advanced persistent threat test – APT, Red-teaming)***՝ առկա բոլոր պաշտպանական միջոցների (այդ թվում՝ կազմակերպչական) արդյունավետությունը ստուգելու նպատակով իրականացվող արտոնված գրոհ:

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2017 թ. մարտի 17-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 10.04.2017 թ. (ՀՀԳՏ N14 (583), 18.04.2017):

35) ***Բարձր վտանգ պարունակող կայուն սպառնալիքի առկայության թեստ (APT hunting exercise)***՝ մինչև մեկ շաբաթ տևողությամբ առավել կրիտիկական սերվերների և աշխատակայանների ուղղությամբ ցանցային հոսքի վերլուծության միջոցով Կազմակերպության ենթակառուցվածքում արդեն իսկ հաջողված բարձր վտանգ պարունակող կայուն սպառնալիքի գրոհի դրսևորման բացահայտում:

36) ***Ներքին տեղեկատվական ցանցի խոցելիության սքանավորում (զննում)***՝ խոցելիության զննիչների կիրառմամբ կատարվող սերվերների, աշխատակայանների, ցանցային սարքավորումների, ինչպես նաև ներքին տեղեկատվական ցանցի այլ ակտիվների ծրագրային և (կամ) տեխնիկական ապահովման մեջ չարտոնված մուտքի պոտենցիալ հնարավորություն ընձեռող անվտանգության բացերի հայտնաբերում:

37) ***Խոցելիության զննիչ***՝ ծրագրային և (կամ) տեխնիկական ապահովման խոցելիությունների հայտնաբերման հատուկ համակարգ:»,

3) Կարգի 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Տեղեկատվական անվտանգության ապահովման համար մշակվող կանոնակարգերով, կարգերով և (կամ) կանոններով պետք է սահմանվեն այն խնդիրները, գործընթացները և միջոցառումները, որոնք ուղղված են Կազմակերպության կողմից տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության ապահովման նպատակների իրականացմանը: Նշված կանոնակարգող փաստաթղթերը մշակելիս Կազմակերպությունը պետք է հաշվի առնի, որ տեղեկատվության անվտանգության ապահովման համար սահմանվող բոլոր միջոցների, միջոցառումների և պահանջների վերջնական նպատակն է տեղեկատվական հարաբերությունների սուբյեկտների պաշտպանության ապահովումը հնարավոր նյութական և ոչ նյութական վնասներից, որոնք կարող են առաջանալ Կազմակերպության տեխնիկածրագրային համակարգերում շրջանառվող տեղեկատվության գործունեության ընթացքի մեջ ոչ միտումնավոր կամ միտումնավոր ներխուժման, ինչպես նաև՝ Կազմակերպության սեփական աշխատակիցներին (ինչպես նաև Կազմակերպությանը ծառայություններ մատուցող այլ ընկերությունների աշխատակիցներին) հայտնի դարձած դասակարգված տեղեկատվության ոչ միտումնավոր կամ միտումնավոր բացահայտման արդյունքում:»,

4) Կարգի 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Մարդկային գործոնը մեծ դեր է խաղում Կազմակերպության տեղեկատվական անվտանգության ապահովման գործընթացում, և առաջին հերթին պետք է կանոնակարգվեն տեղեկատվության հասանելիության հետ կապված խնդիրները: Կանոնակարգերով, կարգերով և (կամ) կանոններով պետք է սահմանվեն տեղեկատվական ռեսուրսների դասակարգման (գաղտնիության մակարդակները, գաղտնի համարվող տեղեկատվության բնութագրիչները) և դրանց նկատմամբ հասանելիության իրավասությունների տրամադրման սկզբունքները: Տեղեկատվության հասանելիության սկզբունքները պետք է կառուցվեն՝ հաշվի առնելով օգտագործողների բնութագրիչները, տեղեկատվական ռեսուրսի բնութագրիչները, ինչպես նաև այլ բնութագրիչներ, ինչպիսիք են՝ ամիս-ամսաթիվ, աշխատանքային ժամեր, հասանելիության միջոցներ և այլն:»,

5) Կարգի 18-րդ կետում՝

ա.«17-րդ կետի 6-րդ ենթակետում» բառերը փոխարինել «17-րդ կետում» բառերով,

բ. 2-րդ ենթակետում «Օբյեկտների բնութագրիչներ» բառերից հետո լրացնել «(տեղեկատվական ռեսուրսների բնութագրիչներ)» բառերը,

6) Կարգի 19-րդ կետում՝

ա. 46-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել,

բ. 47-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Կազմակերպության կողմից կիրառվող թղթային գրանցամատյանների վարման ընթացակարգեր:»,

7) Կարգի 19-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.1-րդ և 19.2-րդ կետերը.

«19.1. Սույն կարգով սահմանված նվազագույն պայմաններից բխող բոլոր միջոցառումների իրականացման արդյունքներով պետք է կազմվեն արձանագրություններ, որոնցում պետք է նշվեն՝

1) միջոցառման տեսակը,
2) միջոցառման մասնակիցների տվյալները,
3) միջոցառման անցկացման վայրը,
4) միջոցառման անցկացման ամիս-ամսաթիվն ու ժամը,
5) պատասխանատու աշխատակիցների տվյալները,
6) միջոցառման ղեկավարի տվյալները,
7) եզրակացությունը (կարծիքը), բոլոր մասնակիցների ստորագրությունները:

19.2. Կազմակերպությունում վարվող թղթային գրանցամատյանները պետք է առնվազն.

1) լինեն էջանշված,
2) տողերը լինեն համարակալված,
3) գրանցամատյանի վարման սկզբի ամսաթիվը լինի նշված,
4) նշված լինի առարկան՝ ինչի համար վարվում է գրանցամատյանը,
5) առկա լինեն ընդունողի և հանձնողի ստորագրությունները,
6) առկա լինեն ընդունման և հանձնման ամսաթվերը,
7) պարունակի մատյանը վարողի տվյալները և գտնվելու վայրը:»,

8) Կարգի Գլուխ 8-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Գլուխ 8. Գործարար գործընթացների անընդհատության ապահովում և թեստավորման կազմակերպում»,

9) Կարգի Գլուխ 8-ը 20-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-20.7-րդ կետերով.

«20.1. Բանկերի ներքին տեղեկատվական ցանցի թեստավորումն առնվազն պետք է ներառի.

1) ներքին ներթափանցման թեստ,
2) արտաքին ներթափանցման թեստ,
3) սոցիալական ինժինիրինգի ռիսկի գնահատում,
